

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված ԱՄՀ Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից ՀՀ վիճակագրական կոմիտեն 2019թ. հունվար-մարտին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 9 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի

	Ամբողջ բնակչությունը	Կին	1 000 մարդ Տղամարդ
2017թ. ապրիլի 1-ի դրությամբ	2 981.5	1 555.3	1 426.2
2018թ. ապրիլի 1-ի դրությամբ [◇]	2 969.9	1 558.8	1 411.1
2019թ. ապրիլի 1-ի դրությամբ	2 962.1	1 561.9	1 400.2

2. ՀՀ բնակչության կյանքի սպասվող տևողությունը հաշվարկված ծննդից, ըստ սեռի 2017թ.¹

	Ամբողջ բնակչությունը	Կին	Տղամարդ տարի
Հայաստանի Հանրապետություն	75.4	78.7	71.9
Քաղաքային	75.6	78.8	72.0
Գյուղական	75.0	78.4	71.6

3. Մանկական մահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ 1 000 կենդանի ծնվածի հաշվով
2017թ. հունվար-մարտ	9.1	10.0	8.3
2018թ. հունվար-մարտ [◇]	8.0	8.9	7.1
2019թ. հունվար-մարտ	7.2	4.7	9.4

4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

	Ընդամենը	Աղջիկներ	Տղաներ 1 000 կենդանի ծնվածի հաշվով
2017թ. հունվար-մարտ	10.5	10.3	10.8
2018թ. հունվար-մարտ [◇]	9.6	10.0	9.4
2019թ. հունվար-մարտ	8.8	7.1	10.4

5. Մայրական մահացության գործակիցը, 2019թ. հունվար-մարտին կազմել է 12.4 միավոր (1 դեպք), 100 000 կենդանի ծնվածի հաշվով, 2018թ. հունվար-մարտի 12.1[◇] միավորի (1 դեպք) համեմատ:

¹ Տարիների այն թիվն է, որ ծնվող սերունդը միջին հաշվով կապրի, պայմանով, որ այդ սերնդի ողջ կյանքի ընթացքում մեկ տարիքից հաջորդին անցնելիս մահացությունը՝ յուրաքանչյուր տարիքում հավասար կլինի բնակչության մահացության տվյալ ժամանակահատվածի մակարդակին:

6. Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում 2018/2019 ուսումնական տարում կազմել է 12 տարի:
12. ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2018թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 2 022 586 դրամ (4 188 ԱՄՆ դոլար կամ 3 544 եվրո):
14. Գործազրկության մակարդակը¹ 2018թ. հոկտեմբեր-դեկտեմբերին (IV եռամսյակ) կազմել է 20.8 %, ընդ որում կանանցը՝ 22.7 % և տղամարդկանցը՝ 19.2 %:
15. 2018թ. հոկտեմբեր - դեկտեմբերին (IV եռամսյակ) տնտեսության մեջ զբաղված¹ է եղել ՀՀ բնակչության 43.7%-ը, այդ թվում կանանց՝ 35.6 %-ը և տղամարդկանց՝ 53.8 %-ը:

¹ Ցուցանիշը հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացված տնային տնտեսությունների աշխատուժի ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա: 2018թ. հունվարից վերանայվել է աշխատանքի շուկայի վիճակագրության մեթոդաբանությունը՝ տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի հետազոտության շրջանակում: Վերանայման հիմքը Աշխատանքի վիճակագիրների միջազգային 19-րդ համաժողովում 2013թ. ընդունված «Աշխատանքի, զբաղվածության և աշխատուժի թրոգտագործման վիճակագրության մասին» (19-րդ ԱՎՄՀ) բանաձևի առանցքային դրույթներն են: Առավել մանրամասն պարզաբանումները տե՛ս 97-108-րդ էջերում: